

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի մայիսի 8-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված» համագործակցության համաձայնագրի թիվ յոթ փոփոխության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարության
Միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝



Տիգրան Գալստյան

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՅՈԹ

Հայաստանի Հանրապետության և
Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև
Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն
ուղղված համագործակցության համաձայնագրի

8-ը մայիսի, 2019թ

ԱՄՆ ՄԶԳ՝ Ջարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի թիվ
AAG-111-G-13-001

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՅՈԹ Հայաստանի Հանրապետության, ի դեմս
վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Դրամաշնորհառու) և Ամերիկայի
Միացյալ Նահանգների՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության
(այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) միջև 2013թ. սեպտեմբերի 28-ով թվագրված Առավել
մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված
համագործակցության Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր):

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2013 թվականի սեպտեմբերի 28-ին Դրամաշնորհառուն և
ԱՄՆ ՄԶԳ-ն կնքեցին Համաձայնագիր՝ աջակցելու առավել մասնակցային,
արդյունավետ և հաշվետու կառավարմանը՝ ինչպես նկարագրված է
Համաձայնագրի 1-ին Հավելվածում (Մանրամասն նկարագիր), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Դրամաշնորհառուն և ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկանում են
փոփոխություն կատարել Համաձայնագրում՝

- 1) ավելացնելու համար Քաղաքական մրցակցություն և Համաձայնության-
հաստատում ծրագրային ոլորտը,
- 2) փոփոխելու համար Համաձայնագրի 1-ին Հավելվածը (Մանրամասն նկարագիր),
- 3) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից հատկացված գումարը 26,528,193
ԱՄՆ դոլարից մինչև 35,127,443 ԱՄՆ դոլար՝ այսպիսով տրամադրելով 8,599,250
ԱՄՆ դոլար լրացուցիչ ֆինանսավորում,
- 4) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ-ի ընդհանուր նախատեսվող ներդրումը
33,000,000 ԱՄՆ դոլարից մինչև 35,127,443 ԱՄՆ դոլար,
- 5) ավելացնելու համար Դրամաշնորհառուի երկրի ներդրումը 3,538,593 ԱՄՆ
դոլարից մինչև 5,045,040 ԱՄՆ դոլար, և

6) երկարաձգելու համար Համաձայնագրի եզրափակման ամսաթիվը 2020 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:

ԱՅՄՊԻՍՈՎ, Կողմերը համաձայնում են Համաձայնագիրը փոփոխել հետևյալ կերպ.

1. Համաձայնագրի 3.1(ա)-մասը՝ «Դրամաշնորհը» վերնագրով, ամբողջությամբ հանվում է և համապատասխանաբար փոխարինվում է հետևյալով.

«ա) Դրամաշնորհը. Սույն Համաձայնագրով սահմանված Նպատակի իրագործմանն օժանդակելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն՝ 1961թ. Օտարերկրյա օժանդակության մասին որոշման համաձայն, սույնով Դրամաշնորհառուին է հատկացնում երեսունհինգ միլիոն հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր քառասուներեք ԱՄՆ դոլարը (35,127,443 ԱՄՆ դոլար) չգերազանցող գումար (այսուհետ՝ Դրամաշնորհ), Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

2. Համաձայնագրի 3.1(բ)-մասը՝ «ԱՄՆ ՄԶԳ-ի նախատեսվող հանրագումարային ներդրումը» վերնագրով, ամբողջությամբ հանվում է և համապատասխանաբար փոխարինվում է հետևյալով.

«բ) ԱՄՆ ՄԶԳ-ի նախատեսվող հանրագումարային ներդրումը. Նպատակի իրագործումն ապահովելու համար ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նախատեսվող հանրագումարային ներդրումը կկազմի երեսունհինգ միլիոն հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր քառասուներեք ԱՄՆ դոլար (35,127,443 ԱՄՆ դոլար), որը կտրամադրվի աճողական կարգով հաշվարկվող մասնաբաժիններով: Հետագա մասնաբաժինների հատկացումները պայմանավորված կլինեն ԱՄՆ ՄԶԳ-ի՝ Նպատակի համար նախատեսվող գումարների առկայությունից, և ԱՄՆ ՄԶԳ կողմից կհատկացվեն Դրամաշնորհառուին տրվող գրավոր ծանուցմամբ: Կողմերը համաձայնում են, որ տրամադրվող յուրաքանչյուր նման ներդրումով, եթե այդպիսինն առկա է, համահավաք կարգով ավելացվում է Դրամաշնորհի՝ 3.1 բաժնում սահմանված ընդհանուր գումարը, և, հետևաբար, կարող է ավելացվել 3.2 բաժնում սահմանված՝ Դրամաշնորհառուի ներդրման չափը: Դրամաշնորհառուն համաձայնում է ԱՄՆ ՄԶԳ-ին տրվող գրավոր ծանուցմամբ հաստատել յուրաքանչյուր նման հատկացման ստացումը, եթե այդպիսիք լինեն:

3. Համաձայնագրի 3.2(բ)-մասն ամբողջությամբ հանվում է և համապատասխանաբար փոխարինվում է հետևյալով.

(բ) ԱՄՆ ՄԶԳ-ի՝ 3.1(ա) մասում նախատեսված ներդրման վրա հիմնված Դրամաշնորհառուի ներդրումը չի կարող պակաս լինել հինգ միլիոն

քառասունհինգ հազար քառասուն (5,045,040 ԱՄՆ դոլար) ԱՄՆ դոլարին համարժեք գումարից բաղկացած լինելով ընթացիկ բյուջեի միջոցներից տրամադրվող բնաիրային կամ դրամական ներդրումներից: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն աճողական կարգով փոփոխում է 3.1(ա) բաժնում սահմանված Դրամաշնորհի գումարը, ինչպես նախատեսված է սույնով, ապա Դրամաշնորհառուի ներդրումը յուրաքանչյուր աճողական մասնաբաժնի հետ համապատասխանաբար ավելանում է այնպես, որ Դրամաշնորհառուի ներդրումը պակաս չլինի դրամաշնորհի գումարի այն մասի մեկ երրորդից, որն օգտագործվում է այն գործողությունների աջակցման համար, որոնցով կամ ուղղակիորեն զգալի օգուտ է ապահովվում ՀՀ Կառավարությանը կամ նախատեսվում ՀՀ Կառավարության ուղղակի կամ էական ներգրավվածությունն այդ օժանդակության վարչարարության, վերահսկողության կամ կառավարման հարցում: Դրամաշնորհառուի ներդրման ճշգրիտ գումարը պետք է նշվի աճողական յուրաքանչյուր ներդրման վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ-ի գրավոր ծանուցման մեջ: Այն դեպքում, երբ ԱՄՆ ՄԶԳ-ն նվազեցնում է 3.1(ա) հոդվածում նշված դրամաշնորհի գումարը 3.1(գ) հոդվածին համապատասխան, ապա Դրամաշնորհառուի ներդրումը համապատասխանաբար նվազեցվում է սույն փաստաթղթում ներկայացված հաշվարկի համաձայն, և այդ նվազեցումներն արձանագրվում են ԱՄՆ ՄԶԳ իրականացման մասին նամակներով: Նպատակի իրագործումն ապահովելու համար Դրամաշնորհառուի նախատեսվող հանրագումարային ներդրումը կախված է Դրամաշնորհառուի համար այս նպատակի համար բյուջեով նախատեսված միջոցների առկայությունից և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից՝ 3.1.(բ) բաժնում նշված ընդհանուր հաշվարկված գումարի հատկացման համար անհրաժեշտ միջոցների առկայությունից: Դրամաշնորհառուն պետք է առնվազն տարեկան կտրվածքով հաշվետվություն ներկայացնի իր դրամական և բնաիրային ներդրումների վերաբերյալ՝ ԱՄՆ ՄԶԳ-ի հետ համաձայնեցված ձևաչափով:

4. Համաձայնագրի 4(ա)-մասը ամբողջությամբ հանվում է և համապատասխանաբար փոխարինվում է հետևյալով.

“(ա) Եզրափակման ամսաթիվը, որը 2023 թվականի սեպտեմբերի 30-ն է կամ Կողմերի միջև գրավոր կարգով համաձայնեցված ցանկացած այլ ամսաթիվ, այն ամսաթիվն է, երբ Կողմերի գնահատմամբ, նպատակի իրագործման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները պետք է ավարտված լինեն:

5. “Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի 1-ին Հավելվածը՝ Մանրամասն նկարագիրը (Մանրամասն նկարագիր) սույնով փոփոխվում է հետևյալ կերպ.

i. Բաժին 1. Ներածություն, երկրորդ ամբողջական պարբերությունից և ՄԱ2. Առավել թափանցիկ, ճկուն և արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում բառերից հետո ավելացնել հետևյալը.

«ՄԱ.3: Առավել արձագանքող և ներկայացուցչական ընտրական և քաղաքական գործընթացներ»

ii. «Բաժին III. Զարգացման նպատակ» բաժնում վեցերորդ ամբողջական պարբերությունից և «ՄԱ2: Քաղաքականության ձևավորման և իրականացման առավել թափանցիկ, արձագանքող և արդյունավետ մոտեցումներ» բառերից հետո ավելացնել հետևյալը.

«ՄԱ.3: Առավել արձագանքող և ներկայացուցչական ընտրական և քաղաքական գործընթացներ»

iii. «Բաժին III. Զարգացման նպատակ» բաժնում վերջին պարբերությունից հետո ավելացնել հետևյալը.

«Միջանկյալ արդյունք 3. Առավել արձագանքող և ներկայացուցչական ընտրական և քաղաքական գործընթացներ: Քաղաքական մրցակցությունը և ներառական քաղաքական գործընթացները էական են պատշաճ գործող ժողովրդավարության համար: Տվյալ ՄԱ-ի նպատակն է խթանել գաղափարների և քաղաքական իշխանության օրինական վիճարկումը՝ ժողովրդի կամքն արտահայտող ժողովրդավարական գործընթացների միջոցով:

Ցուցադրական գործունեություն

Օժանդակությունը կաջակցի քաղաքական կառույցներին և հաստատություններին՝ ապահովելու համար գաղափարների և քաղաքական աջակցություն ազատ մրցակցություն:

Ծրագրերը կնպաստեն երիտասարդության և կանանց քաղաքական հզորացմանը՝ ոգևորությունն ու քաղաքացիական ակտիվությունը վերափոխելու համար կայուն քաղաքական ներգրավվածության և պետական պաշտոնավարման: Զուգահեռաբար, ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կձգտի բարելավել ընտրական գործընթացների ամբողջականությունը: Սա ներառում է աջակցություն իրավական և կարգավորիչ համակարգերին, ընտրությունների թափանցիկ և արդյունավետ վարչարարություն, հանրության լայն մասնակցություն, ինչպես նաև ընտրությունների մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն: Աջակցությունն ընտրողների կրթության, հետաքննչական լրագրության և փաստերի վրա հիմնված հաշվետվությունների և քաղաքականության լուսաբանման միջոցով կնպաստի ընտրություններին առնչվող տեղեկատվության

հասանելիությանը: Քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարելու համար նախաձեռնությունները կկենտրոնանան ընտրությունների ֆինանսավորման թափանցիկության, քաղաքացիների կողմից վերահսկողության և ձայների գնման ու ընտրակեղծիքների դեմ պայքարող հանրային արշավների շուրջ:

Իրականացվող օժանդակությունը կարող է ներառել հետևյալը.

- ընտրական գործընթացների թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության բարելավում;
- աջակցություն բարելավված ընտրական վարչարարությանը և վերահսկողությանը, ինչպես նաև ընտրական իրավական դաշտի բարելավում,
- արդյունավետ ռազմավարական հաղորդակցության արշավների և հանրային շփումների խրախուսում;
- ընտրողների կրթության ամրապնդում և ընտրական գործընթացներում քաղաքացիական ներգրավվածության խթանում;
- ներառական քաղաքական գործընթացների ընդլայնում և քաղաքական հաշվետվությունների ինստիտուտների ամրապնդում;
- քաղաքական կուսակցությունների ներառականության և արձագանքման խթանում,
- խորհրդարանի հետ ընտրողների կապերի ամրապնդում եւ քաղաքականության եւ կոնկրետ հարցերի շուրջ բանավեճերի դյուրացում»:

6. « Ֆինանսական պլան. Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարում» Հավելված 1. Առդիր Ա.-ն ամբողջությամբ հանվում և փոխարինվում է հետևյալով.

Հավելված 1. Առդիր Ա

Ֆինանսական պլան

Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարում

Ժողովրդավարություն և կառավարում

Նպատակ	Ծրագրային ոլորտ	Նախորդ պարտավորություն	Սույն պարտավորություն	Ընդհանուր պարտավորություն
Արդար և	Օրենքի	800,000	-	800,000


Ժողովրդավարական կառավարում	գերակայություն և մարդու իրավունքներ			
	Պատշաճ կառավարում	13,947,529	4,606,250	18,553,779
	Քաղաքական մրցակցություն և համաձայնության ձևավորում	-	1,593,000	1,593,000
	Քաղաքացիական հասարակություն	11,500,664	2,400,000	13,900,664
Ծրագրի մշակում և ծրագրի վարչական ծախսեր	Վարչարարություն և վերահսկում	280,000	-	280,000
ԸՆԴԱՄԵՆԸ		26,528,193	8,599,250	35,127,443”


7. Բացի սույնով փոփոխվածներից, Համաձայնագրի մնացած բոլոր պայմանները մնում են անփոփոխ և վավերական և ուժի մեջ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ, Հայաստանի Հանրապետությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները, յուրաքանչյուրը գործելով պատշաճ կերպով լիազորված իր ներկայացուցչի միջոցով, ապահովել են իրենց անունից սույն Փոփոխություն թիվ Յոթ-ի ստորագրումը և հանձնումը վերոգրյալ ամսաթվին և տարեթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ






Անուն՝ Ծովինար Սողոմոնյան

Անուն՝ Դեբորա Գրիգեր

Պաշտոնը՝ Հայաստանի
Հանրապետության վարչապետի
աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար

Պաշտոնը՝ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան
Առաքելության տնօրեն



Անուն՝ Ալեքս Սոկոլովսկի

Պաշտոնը՝ ԱՄՆ ՄԶԳ/ Եվրոպայի և
Եվրասիայի հարցերով
փոխտնօրենի տեղակալ

Փոփոխություն թիվ յոթ Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև՝ Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի:

AMENDMENT NUMBER SEVEN

TO

Development Objective Cooperation Agreement between the Republic of Armenia and the United States of America for More Participatory, Effective and Accountable Governance

May 8, 2019

USAID Development Objective Cooperation Agreement No. AAG-111-G-13-001

AMENDMENT NUMBER SEVEN to the Development Objective Cooperation Agreement between the Republic of Armenia, acting through the Staff of the Prime Minister (hereinafter referred to as the “Grantee”), and the United States of America, acting through the United States Agency for International Development (“USAID”), for More Participatory, Effective and Accountable Governance, dated September 28, 2013, as amended (the “Agreement”).

WHEREAS, on September 28, 2013, the Grantee and USAID entered into the Agreement to support more participatory, effective and accountable governance as described in Annex 1 (the “Amplified Description”) to the Agreement; and

WHEREAS, the Grantee and USAID desire to amend the Agreement in order to:

- 1) add the Program Area of Political Competition and Consensus-Building;
- 2) amend Annex 1 to the Agreement (“Amplified Description”);
- 3) increase the total amount obligated by USAID from \$26,528,193 to \$35,127,443, thus providing additional funding of \$8,599,250;
- 4) increase the Total Estimated USAID Contribution from \$33,000,000 to \$35,127,443;
- 5) increase the Grantee’s host country contribution from \$3,538,593 to \$5,045,040; and
- 6) extend the Completion Date from September 30, 2020 to September 30, 2023.

NOW, THEREFORE, the Parties hereby agree that the Agreement shall be amended as follows:

1. Section 3.1(a) of the Agreement entitled “The Grant.” is deleted in its entirety and the following is substituted therefore:

“(a) The Grant. To help achieve the Objective set forth in this Agreement, USAID, pursuant to the Foreign Assistance Act of 1961, as amended, hereby grants to the Grantee under the terms of the Agreement an amount not to exceed thirty-five million, one hundred twenty-seven thousand, four hundred forty-three United States (“U.S.”) Dollars (\$35,127,443) (the “Grant”).”

2. Section 3.1(b) of the Agreement entitled “Total Estimated USAID Contribution.” is deleted in its entirety and replaced with the following:

“(b) Total Estimated USAID Contribution. USAID's total estimated contribution to achievement of the Objective will be thirty-five million, one hundred twenty-seven thousand, four hundred forty-three U.S. Dollars (\$35,127,443), which will be provided in increments. Subsequent increments will be subject to the availability of funds to USAID for this purpose and may be provided by USAID upon written notice to the Grantee. The Parties agree that each such incremental contribution provided, if any, shall cumulatively increase the total amount of the Grant set forth in Section 3.1 and consequently may increase the Grantee's contribution under Section 3.2. The Grantee further agrees to acknowledge by written notice to USAID each such incremental contribution, if any.”

3. Section 3.2(b) of the Agreement is deleted in its entirety and the following is substituted therefore:

“(b) The Grantee's contribution, based on USAID's contribution in Section 3.1(a), will not be less than the equivalent of five million, forty-five thousand, forty U.S. Dollars (\$5,045,040), composed of in-kind or cash contributions from current budgetary resources. If USAID changes the amount of the Grant in Section 3.1(a) incrementally, as contemplated herein, the Grantee's contribution shall change with each increment accordingly, such that the Grantee's contribution will not be less than the equivalent of one-third of that portion of the Grant that is used to support activities that either directly provides substantial benefit to the Government of Armenia or involves the direct and substantial involvement of the Government of Armenia in the administration, control or management of such assistance. The precise amount of Grantee contribution shall be indicated in USAID's written notice of each incremental contribution. In the event that USAID decreases the grant amount in Article 3.1(a) under the authority of Article 3.1(c), the Grantee contribution shall be correspondingly decreased in accordance with the calculation provided herein, and such decrease recorded by USAID implementation letter. The Grantee's total estimated planned contribution to the Objective will be subject to availability of budgeted funds to the Grantee for this purpose and to USAID providing the total estimated amount in Section 3.1(b). The Grantee will report at least annually in a format to be agreed upon with USAID on its cash and in-kind contributions.”

4. Article 4(a) of the Agreement is deleted in its entirety and the following is substituted therefore:

“(a) The Completion Date, which is September 30, 2023, or such other date as the Parties may agree to in writing, is the date by which the Parties estimate that all the activities necessary to achieve the Objective will be completed.”

5. “Annex 1 to Development Objective Cooperation Agreement, Amplified Description” (“Amplified Description”) is hereby modified as follows:

- i. In “Section I. Introduction”, after the second full paragraph and the item listed as “IR2: More transparent, responsive and effective policymaking and implementation”, insert the following:

“IR.3: More Responsive and Representative Election and Political Processes”

- ii. In “Section III. Development Objective” after the sixth full paragraph and the item listed as “IR2: More transparent, responsive and effective policymaking and implementation”, insert the following:

“IR.3: More Responsive and Representative Election and Political Processes”

- iii. In “Section III. Development Objective” after the last paragraph of that Section, insert the following:

“Intermediate Result.3: More responsive and representative election and political processes. Political competition and inclusive political processes are essential for a well-functioning democracy. The purpose of this IR is to promote legitimate contestation for ideas and political power through democratic processes that reflect the will of the people.

Illustrative Activities

Assistance will support political entities and institutions to enable free competition for ideas and political support. Programs will promote political empowerment of youth and women to transform enthusiasm and civic activism into sustained political engagement and entry into public office. In parallel, USAID will also seek to strengthen the integrity of electoral processes. This includes support for legal and regulatory frameworks, transparent and effective election administration, broad public participation, and election monitoring and civic oversight. Assistance will foster access to election-related information through voter education, investigative journalism, and fact-based reporting and policy coverage. To address political corruption,

initiatives will focus on elections finance transparency, citizen oversight, and public campaigns against vote buying and electoral fraud.

Assistance to be carried out may include:

- improving transparency, accountability and efficiency of electoral processes;
- supporting improved election administration and oversight and improving the electoral legal framework;
- promoting effective strategic communication campaigns and public outreach;
- strengthening voter education and promoting civic engagement in electoral processes;
- advancing inclusive political processes and strengthening institutions of political accountability;
- fostering the inclusiveness and responsiveness of political parties;
- strengthening constituency links with parliament, and facilitating policy and issue-based debates.”

6. “Annex 1 Attachment A, Financial Plan: A More Participatory, Effective and Accountable Governance” is deleted in its entirety and the following is substituted therefore:

“Annex 1 Attachment A

Financial Plan:

A More Participatory, Effective and Accountable Governance

Democracy and Governance

Objective	Program Area	Previous Obligation	This Amendment	Total Obligation
Governing Justly and Democratically	Rule of Law and Human Rights	800,000	-	800,000
	Good Governance	13,947,529	4,606,250	18,553,779
	Political Competition and Consensus-Building	-	1,593,000	1,593,000
	Civil Society	11,500,664	2,400,000	13,900,664

Program Development and Program Administrative Costs	Administration and Oversight	280,000	-	280,000
TOTAL		26,528,193	8,599,250	35,127,443"

7. Except as amended herein, all other terms and conditions of the Agreement remain unchanged and in full force and effect.


FUNDS AVAILABLE TO ALL
 Checked by: *RB*
[Signature]

IN WITNESS HEREOF, the Republic of Armenia and the United States of America, each acting through its duly authorized representative, have caused this Amendment Number Seven to be signed in their names and delivered as of the day, month and year written above

REPUBLIC OF ARMENIA

UNITED STATES OF AMERICA

By: 


By: 

Name: Mrs. Tsovinar Soghomonyan

Name: Deborah Grieser

Title: Acting Chief of Staff
of the Prime Minister of
Republic of Armenia

Title: USAID/Armenia
Mission Director

By: 

Name: Alex Sokolowski

Title: USAID/Europe and Eurasia
Deputy Assistant Administrator

**Amendment No. Seven to Development Objective Cooperation Agreement between
the Republic of Armenia and the United States of America for More Participatory,
Effective and Accountable Governance**